ԳԼՈՒԽ ՃԺԲ.

Ամենայն ոք որ ինչս իւր յափշտակեսցի աւազակաց և կամ գողանասցէ 'ի գողից և ինքն չատագովելով ոչ կարասցէ զերծուցանել իրս իւր, և եթէ գուցէ զի վիրաւորեսցէ զինքն 'ի աւազակէն կամ գողէն այրն այն համարն կորուցեալ ընչին իւրոյ, մատուսցէ առ իշխանն նոյն աշխարհին և երդմնեսցէ 'ի վերայ Սրբոյ կտակարանին զի հաւաստի կորուսեալ իրն առն յայնմիկ իբր այսքան իշխան աշխարհին յայնմիկ պարտաւորէ հատուցանել նմայ արժանաւորութեան կորուսեալ իրաց և յինքն որոնելով գտցի գող և կամ աւազակն ընկալցի հատուցումն իւր 'ի նմանէ և անձն նորա դատեսցի ընդ Օրինօք։

ԳԼՈՒԽ ՃԺԳ.

Ամենայն ոք առանց հարկաւորութեան արժանոյ մի՛ ելցէ 'ի տանէ և 'ի բնակութենէ իւրմէ յետ ինն ժամ երեկոյեան առ այլ, եթէ հարկն պարտաւորեսցի նմա ելանել, պարտէ նմա ունիլ ընդ իւր լոյս ճրագի, եթէ ոչ ըմբռնեսցի գիշերապահն նմա և դիցէ 'ի բանտի մինչև ցառաւօտ, և քննեսցի այրն եթէ գտցի անմեղ արձակեսցի նոյն աւուր, եթէ գտցի մեղաւոր պատժեսցի ըստ Օրինօք։